Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

552

8 V 29

2 NOV 2009

# ՍԻՐՈՒՆ

# ԶԲՕՍԱՐԱՆ

31 JUL 2013 33610 ...
552
21083-60
19 MAY 2005
Ս-55

# ՍԻՐՈՒՆ ԶԲՕՍԱՐԱՆ

ՅՕՏԱՐԷՆ ՓՈԽԵԱՑ Ի ՀԱՅ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻ

Դիմառնական բանագրութիւնս
գեղեցիկ մարզէ զվարս, որոց
միտք ուղղութեան են տեսող:
Եւ զամենայն ախտացեղ մոլութեանց
զակատութիւնս արմատ արմատ վանէ
'ի բանականաց 'ի բաց:

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

# Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

## Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

## Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ


ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875

# ԲԱՆ ՀԱԿԻՐՃ

Ի վէճ հանդիսադիր առենի ճակատ ընդդէմ յառդարող Տասանց հիւթաւոր Գոյակաց՝ որոց եւ անձնիւր Ոգեաց՝ զօրութեանց եւ Պատասխանատուութեանց՝ Յայտնիք ։

Եւ որոց զհետ մոլելոց մարդկանց թշուառութեանցն՝ գաղտնի ցուցմունք ։

---

Փառաց՝ գործունեայ Արի Ալեւորին հիւսել զմատանց մեր շարժ՝ յայս խաղ խրախուսեցին, և ծանօթ զսոցունց տալ՝ բուռն երագեցին։

Եթէ զիա՞րդ հնարք հընարից մարդկան՝ զկենսախաղաղ թել կենաց իւրեանց խախտել փութացան։

Եւ որպէս հողոյ ապաժաման՝ 'ի նոսին զակատելոց զգլուխ խոնարհեցին։

Եւ ետուն նոցա գտանել զկեանս, որ կարճ՝ կարճագոյն։

# ԴՈՒՌՆ ԱՌԱՋԻՆ

Յաղագս միաբանական ժողովոյ մարդկային Սեռի և ծագման նոցա զանազանեալ աշխարհէս։

ՍԿՍՈՒԱԾ

## Ա.

Ի ԿԱՆՈՒԽ անդ մշտաթաւալ ժամանակի գումարեցաւ ժողով ամենայն բանաւոր ընկերութեան միահեծան թագաւորաց, վեհազուն իշխանաց, նրբաքննին իմաստասիրաց, ընդ որս և խակակուռ խոպանացելոց, և ընչեղի մեծատանց, և արանց աղքատաց և սոսկականաց․ զի թէ հնա՞ր՝ յաշխարհէ՝ և 'ի նորին դիւրեղծական

պատրանաց, յաղէտալի 'ի մահահրաւէր 'ի Թոշակաց, զկծեցուցիչ 'ի վըշտամատոյց 'ի բաժակաց, եւ զսիրտ զայրացուցիչ 'ի նենգաւոր դարձուածոց, հանել փութասցին զվըէժ:

Եւ եթէ անմարթ' ապա իւ 'ի նոսին մշտամեռուցիկ 'ի տառապանս զօրեսցեն տոկալ:

Եւ յորժամ յայս վարանս' և 'ի սոյն հոգ հոգնէին,

Հրաւիրէ ասպնախօս ոմն պճողըճ 'ի զննին եղանել գալստեան Տեառն Գոյակայ: Եւ ըղձայր բնութեան նոցա գոհաբանէ:

Յարեաւ ոմն յանկարծ յընկերական դասուն, շնորհաւոր բացեալ ըղբերան' շարժէր զլեզուն.

"Ո՛ ընկերք, ուրախարար սիրոյն բաղձախնդիրք եւ ցաւակրութեան աշխարհին վշտատար բարձողք:

Ահաւասիկ լուայ ես եթէ 'ի խաւարուղի կոկորդագնաց յանձուկ ճանապարհէ' եւ 'ի ջերմին արբեցու-



թեանն գաւառէ' համագունդ բանակ կազմեալ ուժով հեծելօք եւ հուժկու արութեամբ, դէմ եդեալ 'ի դըրախտ մերձ մեր բնակութեան' դիմեն գոյակք Տեառնց հիւթաւորաց: Այնպիսի դարաստան' յորում վասն նոցա Նախատեսութիւնն զգահոյս չնաշխարհիկս պատրաստեաց:

Տեղի' յորում վարդաբուր վարդանոցաց անուշակ ծաւալք' ցնծալից հրճուանօք 'ի զննին եղելոց' ճաճանչասփիւռ փայփայեն զբիբ:

Տեղի' յորում ցրտագոյն գետոց' անցից գնացից թափք և վազք կարկաջահոս' զոգիս զովացուցանեն արբողաց: Եւ զարմատ մայրից 'ի խորոց անտի' մինչեւ բռնազբօսել' 'ի վեր ընդոստուցանել:

Տեղի' յորում փչմունք, հնչմունք քաղցրասիգ նաղելի շարժմամբ զանջ եւ զերես ընթերակայից հեղլիկ համբուրեն:

Անդ (լուայ) իշխեցող տարւոյն' միակն Գարուն, յորմէ և ամիսք այլա-

կանք արդարեւ արտալանք։ Եւ հում՝ տիեզերալուր երգք Թուխթակաց՝ դեղձանիկ Թռչնոց՝ լու 'ի լու ամենից հանդիսացելոց ։

Եւ 'ի վայր այսպիսի պանծալի ժամ է մերձ գումարիլ Գոյակաց, որոց եւ ձեռն արկեալ զծանր ծանր խորհրդոց։

Օ՛ն արիք ուրեմն, ո՛ ընկերք, փութացուք և մեք յետս տեսարանին »։–

---

Լռէ յորդորն և փոխնայ 'ի դէս ընկերական ժողովն ։

Այս այր ընդ հերիքացուցանելն զբան եւ ընդ հաճեցուցանելն զմիտս ամենայն ընկերութեան, ամենեքեան վաղվաղեցին յայն տեսարան. և զոտս ամբարձեալ հասին 'ի գրախտատեսիլն տեղի։ Եւ մնային 'ի գալուստ եկելոց Գոյակաց ։

---



Յաղագս գալստեան առաջնորդի Հիւսիսային Ափխիոնի (Աֆիօն) ։

Եւ ահա յանկարծ 'ի ծաւալ դաշտավայրացն 'ի հովտէ խրախուսութեան, պաճուճեալ յորակ Թխատիպ տերեւոյ որդի Մեկոնիոնի՝ այր ահրնկէց, զանձն յաչս ցուցեալ ամենեցուն սիրելի, գայր յոխորտանօք ։

Եւ ծառայք՝ որք զնովաւ յաջմէ և յահեկէ ամենայն աչալրջութեամբ 'ի սպաս պաշտաման՝ զանձինս կազմ էին կառուցեալ։ Սոցին և հանդերձից գոյն մակերեւութի՝ հողատիպ նմանութեանըն կրէր զտեսիլ ։

Իսկ այրն սոսկալի՝ զմահատեսիլ իշխանութեանն ունելով զօրութիւն, պատուեալ լինէր յիւրայոց. և մեծավայելուչ տօնիւ մտանէր 'ի խումբս ընկերական ժողովոյն, և բազմէր 'ի գահ՝ որ վասն նորա պատրաստեալ։ Եւ անդէն առ նմին ձեռնամած պարաւորէին կամակատար ծառայք նորա, եւ

զանուն կարգային գովաբանք նորա 'ի լուր ամենեցուն ։

Գո՜վ .

Ավփիլոմ չոութեան տէր ,

« Հուժկու զայրացող , և որոտագին վտարող յատենէ իւրմէ ՚ և լցէ զձայն և զբազմախօսութիւն ։

Եթէ ոք լռութեան է սիրող , մատիցէ 'ի հնազանդութիւն տեառնս , և առցէ 'ի նմանէ զզուարթարարն սրտի խնդամտութիւն . ընդ որ եւ զքուն քաղցր և թեթեւ ։ Զգո՛յշ լերի այնպիսին յիշխանականն պահպանութեան , եւ մի՛ զներգործ նորին յիմիք ընդդիմակաց ընդ վայր հարցէ և կամ պայթուսցէ ։

Խնամ տարցի՝ զի 'ի գալ ժամու արգասատուր վայելմանց առատապէս տեսցէ յոգի իւր զբերկրութիւն ։ Եւ յորժամ զանձն իւր մերձեցուցանէ առ դաւաղան իշխանութեան ահաւորիս՝ արգելցէ զշրթունս իւր 'ի ջրոյ՝ իբրեւ



ցժամս երկր , զի մի՛ սուր բարկութեան նորա 'ի փորի ժողովեսցէ . եւ մի՛ զկենացն տեսցէ զլար խզեալ . եւ զհող իբր զվերման 'ի վերայ ձգեալ ։ Զայն երկաթի և կռանաց , փայտի և խեցեղինաց , հեռասցին յունկանէ նորա ։ Զէշ 'ի մուր իւր՝ և զեզն մի՛ կապեսցէ , 'ի խառնխձաղանձն մի՛ մտցէ ։ Սիրեսցէ վարել զառանձնաւոր զվարս ։ Կրակարան առ իւր՝ ընդ որով և սուրճ հանապազ ունիցի 'ի պատրաստի ։ Հեզիկ խօսեսցի 'ի հարկաւոր պահուն , և յանպէտս 'ի ձիկ հանելոյ զհազադ՝ զգուշասցի ։

Թէ և սոքին՝ անձին մաշեցուցիչք , բայց պտուղ ուրախարար զուարթամտութեանն՝ անպատում ։ Եւ ՚ գիտաց զանհամեմատ քաղցրութիւն վեհիս մերում , եթէ ոչ՝ որ ծառայէն նմա ։ Եւ 'ի վերայ ամենայնի այսոցիկ հաւատարիմ պաշտօնատարութեանն , անուն մակադրական ընծայեսցի այնպիսւոյն՝ Հմյրպինկոռ (Պապա Նէրէսէ)» ։

Լուէ տրէնախօսն չէր ժողով պարծանաց, դէ-մ ’ի նոյն ժողով Պերճն, որոյ հետեւողացն և գովչաց ժողովչացն՝ բանք։

---

Գայլուստ Պէրճի (Պէրճ)։

## Բ.

Եւ ահա տեսանէր ժողովն՝ զի գայր այր փառացի, Պերճ ’ի շքեղ տեսութիւնս, և ծանրաքայլ ’ի գնացս ստանաւորութեան, գողացեալ զեթերին արան՝ և ձգեալ յիւր տառատոկ, որ ձոձէր, ճեմէր ճեմեն՝ ’ի հանդէս մըտանել։

Սպասաւորութք նորա՝ ընդ իւր բազում, և որ առաջի և զկնի՝ ամենայն պարկեշտութեամբ՝ և կարի ակնածութեամբ համընթացք։ Զգեստ նոցա նրբագործ և ծոփաւոր, որոց գողացեալ զպատկեր գիշերին՝ մառախլապատ տեսանէին ’ի լօդիկան, և երեւէին տխուր ։



Գրօշակիք նորա նախադասեալ ’ի գլուխ պարու ։ Եւ այսպիսի ամենաշուք պարծանօք հասանէին առ ետեղ։ Եւ սա եւս զկան իւր պատրաստեալըն կալաւ գահ, և բազմէր ։ Որում յոյն յարուցեալ Ափիբոնն նախակնեւին՝ ըստ վայելչութեանն զնա յարգէր։

Ծառայք սորա զանուն իշխանի իւրեանց ’ի բարձրութիւնս երկնից մերացուցանէին՝ և անպարտելի կարդային զմեծ զօրութիւն նորա ’ի մեծ աղաղակս ։

1002

... Գոչ.

Պերճ մեծանուն տէր,

“Որդ եթէ ոք զփորձ ախոյեանն առնուլ փափագէ, մերձեսցի եւ ընկալցի և տեսցէ զնորհ քաջութեան լեզուի, եթէ քանի քանիցս առաւելու ։

Ջիրք ’ի մեր մերձեցեալս՝ ընծային արծաթին դրդալ, և վասն սերձանուն ցանկալի նշանն, արժան է ճաշակել

զնա 'ի պատկան պահու. մանաւանդ 'ի նօթիս պխտեւան : Եւ եթէ ոք ընդ հակառակն շարժեալ 'ի յադուրդ որովայնին զնա պաշտել հաձեսցի , նա յայնժամ հզօրն մերում օգտամատոյց ձեռնաձգութիւնք բառնին 'ի նմանէ. եւ հիւթք ջերմին փախչել փաղփաղեն քան զհողմ » :

Եւ մինչ յայս՝ յանկ ելանէր Քարոզն, 'ի վերայ տէրտ կորեկոյն, որոյ եւ հետեւանաց՝ եւ գովասանութեան յայտնէր :

---

Գաղղուատ կորեկողւոյ (Պօլս) :

Գ.

Երէքկնէր տեսիլն՝ և յակձխուս մընայր ժողովն , և ահա այր գայր ալեւոր՝ զառամեալ աւուրբք բազմօք : Որ եւ առ տկարութեանն հասկեալ՝ 'ի շուրջս տուրեւառիկ . յեցեալ 'ի ցուպ դողէ , զդեցեալ զկարեդօտ մողոշիկ.



ունելով և 'ի ձեռին զսպիտականիշն զանցեռոյին . և սակայ սակայ որքէր զկաթիլ քրտանց երեսաց խռոց և հասանէր 'ի խումբ ժողովյն : Որոյ՝ որք զյառաջն և զյետոյս ունէին , էին ծառայք Սկիւթացիք : Ի ձերմակ երկվարի՝ զձերմակ երեւեցուցեալ զդրօշ : Որք թէեւ տկարք՝ և 'ի ցաւս մաղասային մակրդեալք , այլ և այնպէս ոչ թուլանային զհետի ունել տեառն իւրեանց :

Զոր տեսեալ կանխաբաղմիկ հզօրաց Ափփիոնի և Պերձի՝ ընկալան զարժանին մեծարանաց զայրն տօնելի 'ի գահ, որ և անց բազմեցաւ :

Պաշտօնեայք սորա 'ի հեղձամըղձուկ հազս տառապեալ , դողդոջեցուցանէին զոտս , և ուռոյցք՝ որ 'ի նոսա՝ չխոթէր զկարգ դասաւոր ծառայութեանց նոցա : Բայց և զպատիւ պահեալ իշխողին՝ թէ և նիհար ձայնիւ , հրատարակէին 'ի գոչ մեծ զանուն նորա :

Գոմ.

Կորեկոզմն հզօր Տէր,

"Ըստ ծերունի ալեացն՝ եւանդուն և բնութիւն նորա. դիտակ դիմացն զանձն տայ մեզ քարոզել հին, այլ ՚ի Թագուն՝ քան զերիտասարդացն արեաց՝ առաւել ունի զկորովութիւն։

Զարմանալի տեսանեմք զներգործ նորին ալեաց և որոց առ նա դիմենն յիւր անդ զառամութեանն, զալիս ալեւորացն ՚ի մատաղ մանուկ վերածէ։

Բու, սա՝ (պօղա) մի՛ ոք կարծեսցէ՝ զի քան զխօսնակ զուարճալիս յերկուրէ յերգս բազմադիմիս զեզու իւր։ Արի՛ք ո՛ ժողով Թէ իցեն կամք ձեր՝ մերձ կացէք, յատեան հանդիսացարուք, և ընդունելութեան արժանաջիք շնորհաց։ Գաւազանի՝ որ զընթացս դիւրէ. զօրութեան՝ յորմէ շունք տագնապաւ հեռանան. և կարողութեան՝ յորմէ գողք հալածին։



Եւ Թէպէտ ցաւագնոտի անձն՝ որ տեառնս մերում ծառայէ. այլ այսուքիկ մեծամեծ պարգեւք ընձեռին նմա"։

Եւ յայս ձայն՝ լռութեան ընդոստ յորժամ բաբախէին, ժամանէ ՚ի խումբն Եւ Գաբրիէլ՝ որոյ Ն հետեւակացն՝ Ն գովաբանութեան փեփիլ։

---

Գալուստ Գարեջինյան (Արչայ սոսյա)։

Դ.

Ետես միւսանգամ ժողովն, և ահա գայր այր վիթխարի. ահիպարանոց. ուսով չափ բարձր քան զամենայն վերել սերմունս։ Ահա ցուցեալ զդէմսն իւրոց զօրաց չկագօյն որակութեամբն. և ընդ տեսակ պատահական քրքումային գունոյ զանձն իւր Թագուցեալ, բժժոտէր զաչս միանգամայն ամենեցուն՝ որոց ՚ի նա հայէին։

Զօրք իւր ընդ իւր արիք՝ և քաջաբազուկք, գաւառաւ Եւրոպացիք, որք յաջմէ և յահեկէն կուռ զինեալք, և 'ի պաշտօն նմին զպարանոց կամօքն խոնարհեցուցեալ։ Որոյ և զոտն յերկրէ՝ 'ի բերանս չափ բարձրացուցեալ՝ անընդհատ համբուրիւ աճէին 'ի ժողովն։

Եւ այն ըստ նախնի բազմելոյն զգահ իւր կալանաւորէր, պատիւ մեծ յընթերակայէն ընկալեալ։ Իսկ պաշտօնատարքն 'ի կուրծս զձեռս մածուցեալ՝ 'ի գովելի բարետեսութիւն ըզտաղաւարն յօրինէին։ Եւ այս 'ի փառըս բազմեալ տեառն իւրեանց։ Եւ ահա ձայն վերանայր 'ի նոցանէ բարեբանական գոհութեան։

Գում .

Գարեջուր ուժով տէր ,

“Յաթոռ իւր նստի, և ահեղ իւրով իշխանութեամբն գոչէ և կոչէ 'ի զօրութեանն հաղորդութիւն զամենեան։ Եւ որ միանգամ հատեալ 'ի կարողութենէ՝ հրաւիրէ հրամայել յատենի հանդիսանալ, և ընկալնուլ զանբաւ արութիւն, եւ անձին զողջին կենդանութիւն։



Արդարեւ չիք ծիծաղ քաղցրանս 'ի պատկեր հզօրիս. բայց անցեալ զանցեալ է այժմ զամենեքումբք յանխորտակելի և յանպարտելի հաստատութեան։

Զիրք շնորհաց՝ յորմէ ընծային կեանք և յարաձգութիւն կենաց։ Պատուէր զգուշութեան տայ ամենեցուն, որոց 'ի նա մերձին, չելանել ընդ սահման իշխանութեան իւրոյ եւ մի խառնել ընդ օտարին զխոնարհութիւն։

Այս թէ ո՞չ մահու տայ զայնպիսին կախան, և զիւր զօրութիւն միանգամ առ ինքն փոխէ ամփոփէ”։

Ընդ այս ձայն, հասանէ Թղթօշարակն 'ի պարս բազմելոց, և պաշտօնատարք նորա ընդ նմա. որոց և գովեցայն բարձրագոյն հրապարակութեանք։

---

Գաղտառ Մեղրոշարանկին (Պաւլստոյա)։

## Ե.

Վերստին եւեթ ժողովն, և ահա 'ի հիւսիս երկրէ ելանէր այր զուարթատես, քաջըրաշեղու և ծիծաղաշարժ, ընդ յԱսպիս ախմնակայեալ զԹագ արժանապատակ իշխանութեանն. և յընթացսն 'ի ծօձել ձեռքել մարգարտածին քրտունք յերեսն նորա՝ ըստ մաքուր ջուրց ողողջակաց ծիրանավառ ծածանէին։ Առ որ ամենեցուն բերան 'ի համբոյր ըղձիւ բաղձայր մերձենալ։ Յոյր հուպ ընթացակից արի երիտասարդացն նաղելի գնացք. և 'ի պաշտօն սպասահարկութեանն մանկամարդաց ախտակափայլ բաղուկք ոլորեալք և մաքրեալք։

Ամենեքին սոքա բեկբեկախօսք, փաղաքշասէրք, մատաղատունկք, ծաղկահասակք, և փափուկք, որք և 'ի դէմս կայտառք և պայծառք։

Եւ ճաճանչագեղութիւն լուսնա-



կին երեսաց նոցա զերամ սիրախումբ գնդին իբր զառաւօտ ծիրանածիծաղ փայլեցուցանէր։ Թեղանիք սպասահարկաց՝ յահէ մեծին՝ յարմուկս 'ի վեր կոյս ժողովեալ և Թագուցեալ։

Էր 'ի բերան ամենեցուն գոհաբան շնորհակալիս. դրօշակիրք իւր՝ անհանգիստ աղաղակէին զփառս նոցին մեծացուցանէին և զպատիւ։

Որ իւրով քաջըրահամբոյր և անուշակ բարուքն գայր և նստէր 'ի գահն, որում Ափիփոն և Պերճ, և Կորեկօղի, և Գարեջուր, յառն յարուցեալ՝ զընդունելութեանն տային զպատիւ։

Եւ ծառայք նոցա անդէն կարգելին կազմէին զդասս ոտնակաց պարառութեան՝ 'ի կուրծս զԹաԹ ժողովեալք։ Եւ ամենայն աչալրջութեամբ 'ի բան հրամանին յակձիռս պշուցեալք։ Ընդ որս և գուսանացն գովջակն երգաբանութիւնք լսելի լինէին ամենեցուն,

Գոյն.

Մեղրօշարակ տէր մեր անուշակ,

« Աւաղիկ ՚ի գահոյս բազմեալ՝ ՚ի քաղցրութիւն սրտի իւրոյ զամենայն ժողովդ ամոքէ:

Օ՛ն մի յապաղէք. փութացարո՛ւք ՚ի համբոյր ոտիցն սորա, որ զխորհուրդ համեմութեանն իբր անեղծելի կնիք հաստատուն ունի ՚ի թեւս՝ թէեւ փոքրիկ թռչական կենդանւոյ այնմ՝ որում ո՛չ եհաս իմաստ իմաստնոյն, եւ կազմութեանն, եւ կարգաց, եւ շինութեան:

Եւ ո՛չ եւս թէ՝ որո՛վ ճարտարութեամբ հիւսէ նա զթագ՝ մերոյս ըս-քանչելի իշխանիս:

Մեծ են փառք սորա՝ և ամենամեծ եղբօրն իւրոյ՝ որբազան կուսանութեան: Ո՛, քանի՛ք ՚ի ճարտար բըժշկաց՝ հզօրիս աջակցութեամբ՝ հիւանդաց մատուցին զկենդանութիւն: Ո՛, և քանի՛ք առ դրունս մերձեցելոց, օժանդակեալ ՚ի սմանէ՝ փրկեալ ապրեցան:



Արդ՝ եթէ ոք ՚ի ձէնջ ցանկայ ընդ հովանաւորութեամբ տեառնս ընդ մըտանել և պարզ մօք ծառայել, պատուիրեմք այնպիսւոյն զգուշանալ ՚ի յաճախ համբուրելոյ զոտս սորա, և մի՛ զայրացուցանել և կամ յետս դարձուցանել զքաղցրութիւնն, և մի՛ խայթ իջուցանել ՚ի վիճակ վախճանին դառնութեան »:

Եւ մինչ գոռաձայն չեւ էր լռացուցեալ զգովաբանութիւն և զորդոր: Յայլ ջոկ հասանէ ՚ի ժողովն, որոյ ներգործութեանց և գովաբան ճառողաց հուշիկ:

---

Գաղուսա Բաղ ջրոյն (Ֆրշնակ):

Զ.

Ետես ժողովն՝ և ահա այր՝ որ զեթերածիրանի ծիածանն՝ աքքայաշուք վայելչութեամբն յանձին կրէր: Եւ զօ-րըգաձեւ զխայտախարի նիշ՝ ՚ի դէմս իւր պծնազեղէր. և յական սուտա-

չաց զծիծաղելի տեսութիւնս յափշտա-
կեալ՝ զպատկեր իւր գեղգեղէր. և որ
ըղկյն էին եղրածիրանի երանգ՝ զմէգ
և զմութ 'ի գիճային աչաց բառնայր ։

Գա՜յր սա, և քանի՜ քանի՜ նազելի
երիտասարդաց դրօշակրաց գեղեցկա-
գունից զատս ընդ իւր փութացուցա-
նէր ։

Զոր գերապանծ փառաւորութեամբ
բազմեցուցանէր ժողովն յախճապա-
կին գահ՝ յաթոռն բիւրեղափայլ ։ Արդ
առ նմին ծառայք նորա ձեռնասունք՝
երամ երամ կարգաւորէին, և կարդա-
յին 'ի ձայն ցնծութեան զառնն ա-
նուն ։

Գու՛լ.

Բաղ՝ փայլուն արեամբն կարող տէր,

( Ֆէշնապ ) ։

“Ծնունդ իւր 'ի բամբիշն արբեցուց-
ցէ սաստկացոյց յոյժ յոյժ ներգործ հրա-
մանին 'ի Քերովբէ դաշտս և յոսկեճա-
մուկ յապարանս. և 'ի բիւրեղի յան-



կկունազարդ պալատս արդ կայ պան-
ծալի տարածեալ ։ Եւ եթէ ոք ակն 'ի
նա յառեսցէ՝ անդէն 'ի սէր իւր ընդ-
գրկէ և յափշտակէ. նուրբ՝ և նրբա-
գոյն զմասունս իւր ցուցանէ ։ Իւրն
բոլորի կայ՝ յորում կայ. թէև հեզիկ՝
այլ յատենի կարողութեան բարձրա-
գլուխ ։ Եւ թէ ոք 'ի ձէնջ ցանկայ ըղ-
բերան խոստովանութեան դնել սեառ-
նըս՝ և մնալ 'ի հնազանդութեան փա-
փագէ, զգոյշ լիցի յանմտքրութենէ,
լուացէ զձեռս 'ի սրբութեան, եւ
այնպէս լիցի արժանի իբրեւ զկոյս մի
վայելել զքօղն շղաշատեռ՝ և զպսակն
գոգաւոր և խորովի ։ Քիմ՝ որ զգը-
րօշմն արեան սորա ծծեաց՝ մի՛ յաւել-
ցէ 'ի վերայ զայլոցն կնիք ։ Ապա թէ
ոչ՝ կորուսեալ զշնորհս պարգեւացն, և
յատրջանալն՝ մնայ նմա շահ, և ոչ ինչ ։”

Եւ ահա այն ինչ չէր էր ժամուն լուսեալ,
Կրկներացն Ջերմեռանդ ընդունելեամբն մը-
տանէ 'ի պալատոն, և գուլ ժողովոց նորա,
և պաշտօնէից տասեաց ոսկեան ։

Գաղուստ կրկնեռաց բերդոյ ոբթոյն:

## Է.

Աղաղակ լինի 'ի ծաղկազարդ յայգեաց՝ և տերևախիտ դարաստանաց քըրդէր, խզեալ զսր կապանաց նուաճութեան, և զընթացից համեստ ունաւութեանց, և այնպէս գայր հասանէր․ այր տապացեալ, զհանդերձս իւր 'ի կրկնակի յեռացումն հրոյ թաթաւեալ ։ Բարուք՝ քաղցր, բնութեամբ՝ նենգօղ, յարտաքին երևոյթըս խոնարհ՝ բայց դարանակալ յունաւութիւնս, խորամանկ և փառքուս։ Պաշտօնատարք իւր պար 'ի պար՝ ըն-ձեռս 'ի ձեռս տուեալ 'ի կայթել, և զերկիր 'ի կաքաւս դղրդել։

Կոչք նորա բարակամահ, գլուխ առ հնոցիւ բորբոքեալ, երակք մերձ 'ի սահմանափակ օթեացն օծեալ․ միահամուռ ընդ այս տապ խիզախէին և զժողովն սասանեցուցանէին ։ Եւ որ 'ի նոսա տէր՝ ո՛չ ակնածեալ զումբէ՝



իւրովի անցանէր բազմէր 'ի կարմրագեղ գահոյս իւր անմէհեր․ յահաբեկըս պաշարելով՝ որք քան զնա գտանին գահաբազմիկ ։

Մանկունք սորա պարառուք, զաջըս ոչ ըստ մարդոյ, այլ այլուր՝ յայլոյ խելս ունէին ։ Որք և արտուղիք յուզւոյ․ գլուխք անհեթեթք․ ոտք ընդունայնաձիգք ։

Եւ այսու եղանակաւ յօրինէին ըզխնջոյս իւրեանց անձոռնիս ։ Որոց և աղմուկք աղաղակի զանելս ժողովոյն ժխորէր, յորոց ոմանք զանուն իշխանին իւրեանց՝ այն մինչ մերձ էին ձամարտակել, մլուսն եւ չեգւօք մտահէլէղ շաղփաղփել 'ի գովաբանութիւն ։

Գուշ.

Կրկնեռաց բեր ոբթոյ ծրատրալ ռեէր
մեր՝ ասկրէ յաթոռ խորուվ,

“Ո՛, յի՞նչ մտօ զբաղի ժողովդ․ յարիցէ եկէ, փորձ փորձեսցէ, թէ ո՞վ քան զնա հզօր, և ո՞վ իբր զնա զօ-

բաւլից անձանց ։ Սմա որք զպարանոց խոնարհեցուցանեն, պատրաստեալ մնան 'ի տեառնէ մերմէ գանձք ցընծութեան . և ոչ իսկ կարօտին այնպիսիք անձին ծածկութի ։ Ձիւնք և սառինք յահէ ջերմութեանն՝ 'ի ջուր լուծանին ։ Ցուպ և գաւազան տկարութեան, Թշնամիք համարեալ են առաջի հզօր տէրութեան տեառնս ։ Եւ ոչ իսկ յաչս նորա 'ի տես՝ 'ի ձեռս և հայիլ, վստահեն ։

Արտալածել հարկ է 'ի ներկայութենէ տեառնս զայնս՝ զի մի՛ անկցին ընկալուչքն յիշխանութեանց, և մի՛ անձին 'ի ցաւս և 'ի գժտութիւնս մատնեսցին . և պատիժ պատուհասի ընկալցին 'ի վեհութենէն ։

Աղէ՜ որոց շըթունք օծանն իշխանութեամբ իշխանին, փակեալ ամրացուսցեն զլեզու և զկոկորդ . չաղ մուտ կթոց կոխուց, եւ մակարդիկ մածնութեանց »։

Եւ յորժամ լսէր բանախօսն բան բարդէր՝



ձայն լայնէր, գինի, որ ոչ էր զհատատ ունի, գայ հզօր զօրութեամբ . զանուանս զէտր և զպաշտօնատարս խոտեալ 'ի գլուխ, որոյ ամբարհաւաճ գեղութեան և աղխյոյն գովաբանութեան ծանուցեալ պետիւն ։

---

Գալուստ Գինւոյ ։

## Ը.

Որոտմունք կատաղարշաւ ձայթից անհնարին գազանութեամբ՝ և ամպրոպք կայծակնաբերք մահագործ շանթաձգութեամբ զայր ածէին առխածասիրտ ։

Որոյ թող զերկիր՝ և զերկինս անգամ՝ բառաչումն բեռեկտանաց՝ սասանեցուցանէր ։ Քարինք ապառաժք, վէմք ապառաժուտք և երկաթապինդ խստութիւնք ծակոտեաց, 'ի նորին սարսափելի յահաւոր զօրութենէ՝ յըսպունգ կակուղ, և 'ի բամպակ դիւրա-

ծիւ, զընութիւնս փոխելն. ուր պալատ սալայատակ, ուր տուն զմարդհաստաբեկ. ուր շէն եւ շինութիւն ամրակուռ: Ամենեքին կական ընդ ծընօտս՝ միահաղոյն 'ի շարժ դղրդելն ողբոց և լալեաց:

Զօրանայր յոյժ յոյժ ամենակարողութիւն հզօրին: Եւ այնքան, մինչ զի՝ զզօրութիւնս դրութեան աստեղաց, զկանոնագրութիւնս թագաւորաց, և զմեծանձնութիւնս մեհից և մեհապետաց. զյարգ եւ զարժանապատուութիւնս ազնուապետաց 'ի գետին կոխան թեւածպարել: Դէմք՝ հրավառ. բոցք յաչաց արձակէին ցոլարձակ. շրթունք արիւնամածք. յատամանց անտի՝ բուրումն ժանտախտի:

Ածէր ընդ իւր զհաւատարիմն զօրս բիւրաւորս. պատկերակիրս դիւաց. կատաղիս քան զինձ. պատառօղս քան զգայլ. դէմք հրէշք և զարհուրելիք: Որոց իւրաքանչիւրոցն համակերպէին պատկերք, ըստ նմանութեան կուսի և մանկան, երիտասարդի



և կնոջ: Եւ գոյն կրակավառ հանդերձից նոցա՝ զոսկրս ժողովոյն բեկէր յերկիւղ և բեկբեկէր: Բռունցք թաթից նոցա՝ զմերկաւոր նոցին լանջ, բուռն յոխորտանօք ծեծէր:

Աղմուկ աղաղակի նոցա՝ զկոկորդ նոցին կերկերեցուցանէր, սուր 'ի բազկի, նիզակ 'ի կշտի, վէրք 'ի կուրծս: Գումարք մահաշունչ աւթից 'ի սիրտս ժողովեալք: Տաւիղք, ջութակ, և այլ երգարանք 'ի պարս նոցին հարստացեալք. երաժշտական ներդաշնակութիւնք խառն 'ի խուռն. ձայնք գուսանաց և գոչյաց անհեթեթ:

Ի ձեռս ձախս իւրաքանչիւրոցն ըմպանակ, և 'ի նոսին արիւն խաղողոյ, և յաջն՝ իւղապարար մարմին գառանց ընդ հուր և ընդ շամփուր անցուցեալ: Առաջի նոցա թռչունք օդայինք եւ վայրի էրէոց համադամ տապակք խորովեալք:

Համբաւ փառաց նոցին չեղտամեղաաչք՝ տափականք եւ մոլիք, որք ըստ հաճութենէ 'ի տաքութեան գլխոյ

ձգեալք յանպատկառս եւ գագաթք պլափոխեալք 'ի հնոց ։ Տեսութիւն լուսոյ մառախլապատ , այնց նմանեալ ապակեաց , զորս սենեակն ունի որոլայնաթափ վայրի ։ Եւ այսպիսի եռանդուն ոդուով յարձակէին 'ի ժողովն ։ Որոյ ամենայն գահակալ արհէք յոտին փութանակի կացեալ՝ առնն տիեզերազօրի զերկրպագութիւն պակուցեալ ձօնէին ։ Եւ զանձինս իբր ծառայս կամակատարս Նորին ենթադրէին , որ իւրով աշխարհըմբիչ մարտադրական մեծ կարողութեամբն՝ աթոռոյն , յորում լայնածաւալն գահաւորէր՝ ըղպատուանդանն կազկանձեցուցանէր։ Եւ ամբարձեալ զոտս իւր ձգէր 'ի վերայ ոտին ։

Մերկէր զերկեցուցիչ զիւր սկաւառակ յակնակապն թագէ. և զաչսն առ բազմեալսն՝ մանաւանդ առ Գարեջուրն շրջեցուցեալ , գոռայր գեր .քան զառիւծ 'ի գառագղի , եւ զատեանն բառանչեցուցեալ սաստկացուցանէր , և ասէր ցբազմականս ։



Մեծաբանէ գինին զեւրմէ և անհաբենս առնէ զնոպեալսն ։

— Ահա ատեան՝ և հրապարակ յաղթանակի ։ Ո՛ է , որ ընդ իմ մրցիլ մըտանէ . եկէ՛ կացցէ՛ առաջի իմ և տեսցէ ։ Ի՛մ են այժ և զօրութիւն . իմ կեանք և կարողութիւն . չէք ոք՝ որում այժ հաւասարեսցի իմոյս կորովութեան ։ Բանք իմ հո՛ւր . և գործք իմ սուր բազմաբերան ։ Եւ այնքան , մինչեւ զլիշապ պատառոտել ։

Որոյ յանդէհեր համարձակաձայն գոչմանց ծառայք նորա և պաշտօնատարք և եւս վստահացեալք , և այժ 'ի կուրծս ժողովեալ , ժողովյն մխորէին զտեղիս աշխարհալուր գոչմամբ , թէ ,

Գո՛վ.

Մեծազօր ունէր մեր մրրկածուփ գինի ։

« Ի կարասաբնակ գերագահութենէ , ոգկուղածին կայտառութեամբն , և յորձահոսան խաղացիւք բազմեալ ,

բարձրապատիւ փառաբանութեամբ յամենայն լեզուէ օրհնաբանի: Ո՛վ ժողով, յուսմակէտս յօրանայք, զի՞ դանդաչէք, և է՞ր թաղծիք 'ի տխուր դիմագրութիւն:

Օ՛ն արկէք կալարուք զկայծ՝ զխաւառան՝ և զգոյլ. լցէք 'ի նոսին զտարածութիւն ծովահոս արեան իշխանապետիս: Դի՛ք 'ի բերան ոչ և եթ շօշափմամբ համբուրին, այլ խորագոյն 'ի սիրտս իջուցէք. որոյ սիրոյն տապարար հրդեհ, և եռանդ բորբոքեալ բոցոյն՝ զամենայն խոչընդան՝ 'ի մի ումպ կլանէ:

Դագարին Թագաւորաց ահա՛ք, 'ի ձիրանս ձեր ծառայեն առիւծք: Տեառնըս զօրութի՛ւն է, որ տայ երեւակայութեամբ տապալել զաշխարհ վեր 'ի վայր:

Պատկերակերպէ զզանազան մտաբերական մխիթար: Զանկարելին՝ խապաւ հեշտ. փոխէ զմիտ յարքայ. և զհամայն արքայութիւնս 'ի պճղունս թաթի ոտիցն դատափետէ:



Հա՛պա որք միանգամ ուսուցին զդուռն աղօրեաց 'ի պաշտել զնա, պատուէր տամք նոցա, ամենեւին հրաժեշտ տալ 'ի ջրոյ, և ընդ բարեկամութեամբ բերկլ մանեղեաց:

Ի քամուածոց խաշանց հեռանալ 'ի սէր աղջանից և մրգեղինաց միանալ: Եւ զայս գիտասջիք, զի առ մին և առ երկու նուագս ընդ յետս դարձուցանելն զնա ումեք, ոչ զպրանաց տէր մեր. զի առ փոքր փոքր կրթէ ընդ նա 'ի յուսումն և 'ի սովորութիւն. մարզէ այնպիսւոյն զանսովոր խակութիւն, մինչեւ յունակացուցանել:

Եւ ձիրք պարգեւաց նորա այսոքիկ: Տա՛յ՝ զի բանն միշտ վերանայ 'ի նոյանէ. և զոր խօսին՝ յայլոց խելս: Զիւքեանս տեսողաց՝ զծիծաղ ընծայեն երեսաց: Տա՛յ զի 'ի ծայր լեզուի նորա, զքիմ՝ զլինար՝ և զշրթունս՝ սլորուն յամրադարձութեամբ սրբեն: Որոց և եթէ դէպ լինի առ բացօթեայս 'ի խարխափ մթան գիշերի ննջել, շունք զաղտագողի և անշշունչ մերձեալ 'ի

բերանս նոցա . սիրեն՝ սրբեն , լիզեն մաքրելով զշրթունս , և զփոխած , և զերես :

Տա՛յ՝ զի ՚ի խնջոյս բազմականաց խընծոր գժտութեան հոլովեն . և ընդ բըծախնդիր հետազօտութիւնս լըջմտութեամբ պայքարեն : Եւ խոյսս թըշնամութեամբ և անարգութեամբ հաստատել զիւրեանց ջանան զկարծիս : Եւ տաղտկացեալ արագ ՚ի հետազօտութենէ միոյն՝ շրջին փութով յայլ հակառակխօսութիւն : Եւ այսպիսի են ահա շնորհ տեառնս մերում : Եւ որ ցանկայ՝ մի՛ յապաղեսցէ ՚ի հաղորդակցութիւնս ,, :

Եւ բան հրապարակախօսին յորժամ ՚ի այն դադարէր, օձն՝ զզօձեալ զիւր երեսս յափշենի փայլեցուցանէ, զիւր դրօշակներս ՚ի հանդէսին շէնշէն և գոյնագոյնս մեծա յուրայոց ընդոստնէ :



Գաղուատ Օղնոյն (Բաժը) :

Թ.

Եւ ահա միւսանգամ գայր այր զուարթատես , սպիտակափայլ , զծիծաղ զերեսօքն արկեալ , իւրով ծաղկածլին երամով . անձն թեւթեւիկ , զոտըս որթասաղարթ յայգիս յածեցուցեալ : Գնացք իւր նազելիք , դէմք ՚ի գեղնորակ վարդից առագաստաւորեալ : Ընթացք իւր նրբին , ՚ի կանաչաբոյս տերեւս բուրաստանաց զբօսեցուցեալ :

Ոտնառութիւնն՝ սուր , սէրն՝ յանկարծալուռ , տեւողութիւնն՝ դիւրաշէջ , և մանկամարդութիւնն՝ ոստոստասէր :

Դրօշակիրք նորա ընդ նմա , յորոց ոմանք զքեհեզս կրէին կանաչագոյնս՝ ըստ յակինթ . այլք սպիտակափայլք՝ ըստ լուսին . ոմանք կարմրերանգ՝ ըստ սուտակ , և կէսք սպիտակ ըստ անդամանդ : Եւ սիրաշատ ընկերակցութեամբ

դաս առ դաս զթաթս 'ի քաղցրաւէ-
նիս թաթաւեալ՝ ընթանային միա-
ջումբ 'ի ժողովն:

Եւ 'ի ժամանելն նոցա՝ գահապա-
կեալքն ամենեքին՝ յոտն 'ի պատիւ ե-
լեալ. մեծարէին զայն սիրուն 'ի գահ
բազմիլ պայծառաշուք: Եւ ծառայք
նորա առաջի նորա շաքարեղինօք եւ
քաղցրաւենեօք կային միայն յապաս
հրամանին:

Յորոց մինն Ճրգ. երգէր, ձայն մե-
ղրացուցանէր և զժողովն 'ի լուր բա-
նին պատրաստէր:

Գող.

Ողի՛ որ յապակին ղօղի՝ մաքրաճակատ
տէր մեր կարող:

“Ահաւասիկ յաթոռ իւր արդարա-
վայել բազմեալ, զախորժաւէրս հրա-
ւիրէ: Ինքն պարագլուխ 'ի կոչունս
իւր լուսափիւռ ակն յոսկենիւթ մա-
տանիս՝ այնպէս շնորհափայլ: Եւ տա-
կաւին ըստ նորել մանուկ 'ի լեզու,



թոթով խօսիւք համեղալուր արտա-
բերէ զհագագ աթուեթայից:

Յառաջատես մաքուր պարզերե-
սութեանն ամենայն լեզու՝ կաթոգին
ըղձիւ զշրթունս համառօտ համբու-
րիւ մերձեցուցանել ցանկայ: Ա՛զէ ու-
րեմն մատիք առ սիրելի տարածու-
թիւնն. և յորովայնի բազմեցուցէք
զարծաթատեսիլ շնորհաւորութիւնն. և
լերո՛ւք ջեռացեալք ջերմ սիրով 'ի նմին:

Ի սեղան և 'ի մեծածախ հացկե-
րոյթս բանալի փակեալ ո՛ և իցէ շըր-
թանց, սա՛ է. և ստլաւ բանին ռահք
յոգնախորտիկ ճաշակմանց: Եւ որ ընդ-
հովանեաւ զօրութեան մուտ առնէ
քաջ զօրավարիս, չէք նմա կարօտիլ
պատերազմական նուագարանաց, զի
կուրծք իւր թմբուկք, ձեռք իւր թըմբ-
կահար. բերանն սուլիչ խաղուց, ոտք՝
ոըք կազմեն զկաքաւ:

Եւ յայսպիսս մերձեցելոց՝ շնորհէ
տէր մեր պարտէզս պտղաւէտս, զգե-
րազգի քաղցրաւենիս, ընդ որս և զկա-
լուած սեխենեաց:

Զգուշասցի նա 'ի յոլով բարեկամութենէ չուրց, եւ շատասցի փոքումբ. և ձիգ ամբ կենաց տեսցէ 'ի կեանս իւր »:

Եւ չէ ապրեալ որս գգոյլ, ընթանայ ծանր ոտնատոութեամբ սուրճ, մտանէ հանդերձ պալտօնէիցն 'ի ծովուն, որոյ խորհրդոյ վարոց և երգաբանութեան գովութեանց:

---

Գալուստ Սուրճ սեւակրի (Գահվէ):

## Ժ.

Եւ ահա 'ի Հնդիկ երկրէ յերջանիկն արաբիս այր Սաբայեցի, բարեհռչակեալ Նթուլպ գունովն, խորին խորհրդով լցեալ, և զգաստ ուշիմամիտ և նրբատես, հանդարտակեաց և խաղաղասէր, զգօն եւ վերապատուքան զամենայն փիլիսոփոս 'ի հանճարս: Խաղայր դիմէր գայր գաւաթարշաւ խիղախմամբ, և հասանէր զօրու ծանու անթիւ պաշտօնէիւք 'ի



ժողովն: Աքեմական ճգնակիր զգեստաւորութիւնն զամենայն բերան հրչու հպատակութեամբ և փափաքելի մրով յերկրպագութիւն իւր խոնարհեցուցանէր: Եւ որ 'ի Նմանէ հոտ Ճշկաբուր՝ յունիս ընթերակայից և բացականացն երագէր և մտանէր: Եւ բուրկէն անուշարար հանդերձիցն՝ ըղձքիմն համայնից և զընդ իւրեւ եղելոց զմայլէր: Որոյ միակ սիրելի, դրօշակիրն ծուխպ ընդ աջմէն զգնայր՝ ծխովըն ահագին: Ծառայք նորա զարդարեալ բազմագունի գաւաթնօք: Գըլուխք գաւաթանացն ելեքտրինաւոյք եւ անդամանդայինք՝ ծանրագին ծախիւք գեղգեղեալ: Հուր և ծուխ ցոլացեալ փչէր յիշխանական նոցին գաւաղանաց: Եւ լուսաւորութիւն առկայծեալ ճաճանչունակ փայլատակմանըն՝ զմէգ մառախլապատ մթութեան օճաճեւ պարուրին 'ի վեր ընդ օդս օճտեցուցանէր:

Տեսեալ զայս խիղախ՝ և զծուխ հըրոյ ամենայն գահակալաց՝ զարհուրէ-

քն թէ՝ զի՞նչ այս խաբշիկ ամպ, և ո՞ 'ի նմա հեծեալն սեւադէմ: Ցերկիւղ մահու ըմբռնեալ՝ աճապարէին տալ գարշապարացն երկրպագութիւն, և սարսափեալ անդանդորր սիրտք նոցա զանձիւք ծեծէին:

Իսկ այրն ահընկէց՝ խաղաղաձեմ նայելիւք փառաւորեալ յամենեցուն 'ի ժողովն մոմնէր: Եւ գահակալացն կարկեալ լեզու, և բերանք պապանձէին: Խցան շուրթք շրթանց. եւ աղխեցան խաղալք ծնօտից նոցա. կցան լեզուք ամբարտաւանութեան. և խորտակեցան ոսկերք կողից նոցա. համր եղեն շրթունք մեծապարծք և աչք ամենեցուն զամօթի հարեալ՝ զգետին ունէր:

Ցարեաւ արժանաւորի առնս քարոզն գովասանութեան, և զբարեխաղաղ կարգ կառավարութեան նորին հռչակ հարկանէր:

Գո՛չ.

« Ո՛ն՝ ո՞ ընդունայնաթօպ քրտնանահեղք արկք, և ո՛ անձնամեռուցիկք



անմիտք. ընդէ՞ր է ձեզ զհետ մոլիլ մահաշունչ տերանց: Լերո՛ւք յարերո՛ւք ընդ իշխանութեամբ՝ Սուրբ սուրբ մեծանուն տեառն. որոյ չնաշխարհիկ առաքինութիւն՝ թողում աշխարհի հռչակ հարկանել:

Բայց այժմէն հարցանէ տէր մեր ցհանդիսակալ ատենաբաղիկդ հզօր. եթէ յի՞նչ պէտս ժողովեալ՝ կայդ մարդկան բուռն ձնշէք ընդ իշխանութեամբ ձերով:

Եւ թէ այդ՝ 'ի բարիս ընկերական միութեան, հրաման հանէ տէր մեր իւրաքանչիւրոյդ պետաց, խօսիլ եթէ զի՞նչ ձեր օգուտ. զոր համատեւութիւն մարդկան գիտացէ, թէ ո՞ւմ 'ի ձէնջ արժան իցէ ծառայել:

Որո՛չ որո՛չ յայտնեսցէ ամենայն գահակալ զարգասիս իւրեանց զոր ունիլ պարծին »:

Զայս նորդայեալ հանճարծ Քարոզ՝ լուէր ամենախօսն:

Խոր լռութիւն:

Այսինքն կշռել բարւոք անկ է զամենայն գործ, զոր ոք 'ի կիր առնուլ փափագէ. զի կոյր զկուրայն անխորհ գործունութեան և առանց իրաւացի դատողութեան՝ թիւրին ուղղութիւնք և 'ի դերեւ ելանեն գործք:

# ԴՈՒՌՆ ԵՐԿՐՈՐԴ

Կարգ մրցական բանակռուութեան անձնէւր Գոյակաց: Որոց՝ թէ զանձանց անապարծու-թեանց, եւ հրապարակախօս շաղփաղփանաց. և թէ ընդ մթեան 'ի պայծառ հանդատանու-թեան զձմեռոց և զանհաճ ներգործութեանց՝ Բաշխերեալի՝ Տեսիլչ:

ԳԱՀԱԿԱԼՔ իմնեանք 'ի խոր լռութիւն մտեալ՝ հարուստ ժամս ա-կըն ածէին իրերաց, եթէ ո՞վ արժան կանխել զանձին գոլութենէ:

Իսկ ժողովոյն լռելք՝ տեղի տային ուշի ուշով իմանալ:

Եւ որովհետեւ առաջին գտաւ Ափիփոն 'ի գալստեան իւրում, նախա-

բանելն իրաւունք անձին համարեալ՝ և ոժ 'ի կուրծս ժողովեալ՝ պայքարէր ընդ Պետոս՝ կոխել յոտին զարժանապատուութիւն նոցա . և զկարն յարգդասէր բարձրապատիւ ։

## ՏԱՍԱՆՑ ԳՈՅԱԿԱՑ

Վիճաբանութեանց՝ Ափենախօս Տեսութիւն Եւ նախ Ափփիոնի։

## Ա.

Եւ չհանդուրժեալ էկալ 'ի լռութեան, երկնէր Ափփիոն զկար զզօրութիւն յաչս ամենեցուն անպարտելի երեւեցուցանել։

Անդէն եւ 'ի լեզու՝ և 'ի լուր ամենեցուն ձամարտակէր զինքենէ ։

Խօսի Ափփիոն զանձնէ, և զէր զօրութեան վերադասէ քան զամենեցուն, և եղերէ զնէրս Նոցա 'ի գահէ, և զբազմեն 'ի բարձէ։



«Ո՛. ո՜վ պետք, և ատենական հանդիսիս՝ անարժան աթոռակալք, ո՛ և ո՛ ժողով։ Քննիչք ընտրութեան, լուարո՛ւք. ո՛ է, որ երբեւ զիս առատացեալ ունիցի զօգուտ յազգս ողջոյն։ Ո՛չ երկմտիմ երբէք թէ ամենայն ընկերութիւն վերադասեսցէ զիս 'ի յարգգեր քան զամենայն պետ։ Ո՞չ աւանիկ ես եմ, որ առ միայնակեացս և առառանձնաւոր թախծեալս հասանիմ գթութեամբս մխիթար։

Եւ անեմ վերածեմ զնոսա 'ի ցընծութիւն բերկրութեան, եւ 'ի սգոյ զնէրտ՝ 'ի զուարթուն խրախութիւնս վերափոխեմ։ Ոքք և իցէ զգանձս ոսկւոյ՝ 'ի ծոցս իւրեանց, և որպէս ըզկենդանացուցանող ոգի՝ 'ի գլուխս իւրեանց յարգանօք զիս կրեն. և ամենայն խընամով պահեն պահպանեն։

Կորուստ իմ կամ հեռաձգութիւն մահ է նոցա. բերանք փակին, լեզուք լռեն, հագագք նուաղին, շունչք ընդհատին, յորոց եթէ գնացք իմ յապա-

ւեսցին և ոտք իմ նուաղեսցեն՝ յիս թէ ամփոփեսցին ։

Ազնուորդի եմ, եւ ծնունդ ազնըւական, եւ որոց զիմն վայելեն ։ Ո՛ն արիք եւ տեսէք զեղուս, եթէ ո՞րպէս ըստ դեղձանիկ թռչնոց խնդամըտութեամբ զանուշունս երգեն ։ Անուն իմ մեծ՝ 'ի Հնդիկս՝ 'ի Սաբա, 'ի Պարս՝ և յԱսիայ. և ընդ համայն ծագս աշխարհի գոհացողական երկրպագութեամբ բարեբանի ։ Գոյն երեսաց իմոց՝ և հոտառութիւն զգեցեալ պարեգօտւոյս՝ 'ի պատկառելի փոխակերպութիւնս ածէ զդէմս որոց մերձենանն յիս ։

Ծաղկածին հզօր զիմ կարողութիւն, ո՞ զօրէ, և զի՞ հնար, յայլս տեսանել։ Եւ ահա ես 'ի միջի, և կեանք իմ յիս անվախճան ։ Ա՛ղէ զի՞արդ իշխեցիք դուք, առ երեւոյթս գահաւորեալքդ, առաջի իմ լինիլ. և կամ վիճել զձերդ կարողութենէ ։ Միթէ համարիցիմ ինչ զձեզ. քա՛ւ, երբէք ։

Զարմանք այս՝ թէ ընդէ՞ր ոչ պա-



տեաց զձեզ սարսափ. յորժամ գիտացիք, թէ աստ է անձն իմ փառաշուք, և տէրութիւն իմ յաշխարհի ։

Ո՞ր համարձակութիւն սրտի վըստահս արար զձեզ 'ի ներկայութեան՝ յորում գամ, բան բանալ, և խօսք ասել ։

Բարձրաբարբառ յոխորտ քարոզչաց ձերոց և մեծաբանութիւն, ունչս առնել և կատակս հանել զձեօք զիս տախպէր. հրաման իմ պատգամ անջնջական, եւ խօսք իմ սրտից՝ անկորուստ կնիք »։

Եւ մինչ զձգում բանին և եւս յաւելուր ջեռնոյր Ափփիոն, Պերճ պերճաբանն իրաւատես չհանդուրժեալ Ափփիոնին ամբարտաւան շաղակրատութեան, զժնեայ հայեցիւք զաչս 'ի նա դարձուցեալ, ասէր.

Պերճ ունայնաբանութենէ զգուշ Ափփիոնի, յայտնէ շնորհաւոր բարս նորա, և տառանաց յետ պարծ ։

## Առանձնախօսութիւն պերճի (Պէրլ) ։

### Բ.

« Ա՜յ դու անհամբոյր՝ աշխարհակործան ախտաւոր. զի՞նչ օգուտ 'ի քէն, որ քեզ ծառայէ. է՞ որ արդեօք վատթարագոյն եւ քան զքեզ հիւծախտ կենաց մարդկան ։ Տակաւին յիմ յուսաս, և ի՞ւ զքոց չարութեանց անամօթաբար պարծիս ։

Մերձեցելոց 'ի պարծ 'ի պաշտօնքո, զսիրտ իբր զերեփ ծակոտկէն փըտեցուցանես ։ Մաշկ ծածկարանի ականողեաց նոցա 'ի թմբրեցուցիչ 'ի քումմէ քնաբերութենէ, բանին եւ ոչ երբէք ։ Եւ յաշխարհի 'ի սիրատեսիլ արեգականն վայելչութենէ՝ թողուս թափուր ։ Ուր նստին, և զոր տեղին արժանաւոր՝ անգիտանան ։ Կորանայ քամակ. զանձ ծեծէ կզակ. դողդոջան ձեռք. երերին ոտք հատեալ յուժոյ. և մէջք թիւրին ըստ աղեղան ։ Որք և զայս կենաց՝ 'ի ծուղակն,



իբր 'ի հաց գնեն ։ Ի սուրճ և 'ի կրակարան՝ իբր 'ի ջուր զովարար ։ Ի քեզ՝ իբր 'ի նեցուկ և իբր 'ի հաստատուն խարիսխ ։ Թշնամի գոլով բնութեան՝ զաճեցողական նիւթ նոցա սպառես, և 'ի յատակելոյ զաշխարհ, և 'ի տապալելոյ զընակիչսն՝ ոչ դադարիս ։ Առաջի քեզ անհնազանդելոյ՝ 'ի քեզ ըզհնազանդեալսն ծաղածանակ կացուցանես ։ Կատակեն զքոյսն՝ և իբրեւ ըզխելագար մոլի՝ խեւ ցնորամիտ՝ եւ ծեր պխնկոտ՝ մականուանեն ։

Շփոթես զմտաւորական կարգ նոցա, 'ի ցուպ խոնարհեցուցանես, ուղղոյս սապատողս առնես, և ծիւրես զկկոց հենի կենաց նոցա. և հուսկ ուրեմն 'ի ցաւս և 'ի վիշտս տագնապեցուցեալ՝ մահու տաս բաժին ։ Եւ այն առ թշուառաբնակ հնոցիւ 'ի խորշըս մթագոյն յանկեան իմիք ։

Եւ որովհետեւ այդպէս, չիք քան զքեզ վատթար. և ընկերական կենաց մարդկան՝ ամամ մահու »։

Յայս կնքեալ զբանս երախտաբանութեանն Պերճ, դարձուցանէ զծարոյն յետս գօղ:

« Եւ արդ՝ միմիայն հաճոյ յաչս՝ և ընդունելի ՚ի սիրտ՝ ընկերական բնութեան, ես եմ. զինեւ պարեն դասք նազելի հասակաց. պճնազեղ կուսանաց, կայտառ պատանեկաց, զուարթատես երիտասարդաց, և աղուազարմ օրիորդաց, կատարելոց բարեսիրաց, և ծերոց ծանրամիտ զգօնաւորաց: Եւ զիս յարգանօք ՚ի վերայ Թաթից մաքուր բազկաւ բարձեալ բերեն և ոչ ոտից իմոց կռուիլ զերկրաւ, և ոչ իսկ ՚ի տան բնակեցուցանեն փայտեղինաց : Յարծաթապատ բազմիմ դահոյս. ամենքուր սրբափայլութիւնք իմոց սեննեկաց անընդհատ և անընդմէջ զանձամբս ողջագուրեն : Եւ զիս յիշեցից ՚ի ջրկճից անձապահելոց, որք ՚ի սպաս վասն իմ անխափան պատրաստին : Համեմ նոցա, իմ բարք բարիք. ես՝ և միայն ցնծութիւն նոցա :



Ո՛չ ոք՝ որ հաւասարեսցի փառաւոր շքեղութեան իմոյ. և չիք, որ ընդունայն դատեսցէ զհաւէտութիւն իմ: Ուր չիք իմ սէր, չիք անդ և տեղի շնորհաւոր :

Տի՛նա՝ յորժամ ՚ի խումբ բազմականաց ծագիմ, ամենեցուն փայլին ոտից ուրախակցութիւնք : Եւ ՚ի պաշտօն մըտանեն անձին իմոյ իբր արքայի՝ ՚ի գըլուխ միանգամայն ածել և զիմ հրաման : Ապա գիտասցէ ամենայն անձն իւր գահակալ՝ եթէ իմ է ամենայն ժառանգութիւն բանականաց. և ո՛չ ոք է արժանի տիրել նոցա իբրև զիս »:

Եւ յորժամ ժամ առնոյր Պերճ ՚ի բանս իւր. փչացեալ կորնեկօղի ՚ի շատաքանութիւն պերճախօսին, ընդդէմ զինէր բանից նոցին, և ասէր.

Կորնեկօղէ զանդիտանութիւն Պերճի և Աֆֆէնի միանգամայն յերեսս փայ նոցա, և դարձուցանէ զնոսա անապարծս :

---

Յանձնախօսութեան կորեկօղոյ (Պօլս):

## Գ.

« Անձնապարծք դուք, շռայլք և ամարդիք. զի՞րդ իշխեցիք առաջի փրփրածին ալեաց բարկասիրտ ծերութեան իմոյ՝ զկապ լեզուի ձեր քակել, և զլար պատկառանաց խզել: Զի՞նչ ձեր այս հպարտ բանակռուութիւն, և զի՞նչ գոռոզ փքացումն և ամբարհաւաճութիւն: Արդարեւ ասեմ, զայդ յանդգնութիւն ձեր՝ ունիմ ժողովն դատաստանաւ պարտաւորել, և ածել 'ի կառափ ձեր պատուհասակոծ պատիժ, հանելով զձեզ յատենիս երեսաց և յամենայն ընկերութենէ: Զեզ աքսոր իմ վճիռ հատցէ:

Ո՞ է, որ իբրեւ զիս ալեօք լցեալ հընացեալ և իրաւաբանական ուղղութեան տեսանող: Ի վաղու իսկ 'ի յարգանդ երկրի յորովայնի մօր ձերում տեսի զձեզ, և ահա որդիք պոռնկորդիք. կէս մի 'ի միոյ, և կէս մի 'ի միւս-



մէ: Գնացք ձեր՝ խառնագնաց. գատողութիւն, թիւր. կարկաչ ձեր ընդլուխ ծեծէ ըստ կաչաղակաց: Համբաւ ձեր վատանուն, և գործք մահահրաւէր: Անուանին այն Միմոս մեծատուն՝ յաճախեցուցեալ ընդ ձեզ զբարեկամութիւնն, ոչ եգիտ օգուտ ինչ անձին 'ի ձէնջ: Վատնեաց 'ի ձերդ պաշտօն զգանձ առատ, իբր թէ գըտցէ դարման մարմնոյ. հուսկ ուրեմն էարկ զանձն 'ի յետին աշխարհի չքաւորութիւն և 'ի հիւանդութիւն տառժանաւոր. զհարստութիւնն՝ ընդ նըմին և զոգին իսկ փչեաց յիւրմէ:

Այնպէս համարիմ զձեզ ճճիս զաղբոտիս որպէս զեռունս 'ի գարշելիս: Ո՛չ նատիք դուք, եթէ ոչ յաղտեղասէրըս և յախտախնդրակս:

Խաւար զխաւար, այսպէս և ախտ զախտ միաբանէ: Ի ձերդ խորամանկ խարդաւանաց պահեսցէ զերծ զընկերական միութիւնս՝ Տէրունին »:

Հաւաքեալ յագագ կորեկօղոյ 'ի ծերունեն

Յաղէ հաղ ապս դադարեցուցեալ զպարոյլեա-
նին, անցանէ յանցին գովութեան:

«Եւ արդ՝ որովհետեւ այսպէս՝ գի-
տասցէ ամենայն բազմութիւն զի իմ
է իրաւունք միահեծան տէրութեան,
և ես եմ արժանի ընդունելութեան.
առ ի սիրաւորեալ ոչք մտանիցեն,
կազմեն յապահովել զսիրտ զիս օշարակ.
և յիմմէ արի զօրութենէ՝ 'ի բոց զբոր-
բոք ախտաբեր տենդի փարատեն: Չի՛ք
'նոցա արատ ինչ երբէք յինէն. կամ
քին կծաւոր: Սկիւթացի՛ք՝ և որեարք
հզօրք, առանց իմ, և զիա՞րդ լինիցին:
Ընդ նոսա բազմիմ, 'ի կոչումն նոցա
մուտն իմ. և հանդիստ պարծանաց՝
և պատիւ իմ իսկ՝ անց 'ի սիրտս նոցա.
և մարմին կենսաւոր իմ աթոռ:

Արդարեւ եմ՝ թէ եւ ծեր, բայց
այրական խիստ զօրութիւն իմ քան
զկորովեաց բազում անցանէ:

Օ՛ն ուրեմն. ո՛ անպէտ յաջաղկոտք
չիջուցէք զբան ապաղակլի պարծանաց
ձերոց. զի և իսկ չէ արժան ձեզ յա-



տենի սակտակամայ ծերունւոյս լե-
զու շարժել»:

Եւ առ այս պարծանս կորեկջղւոյ
մամռեալ,

Նախատէ Գարեջուր զծերութիւն կորե-
կջղւոյ. ախտամած զառամութիւն նորա ե-
ղեալ, և ցանցառ ձեռագրն յայտնաբանէ:

---

Ատենախօսութիւն Գարեջրոյն,
(Արձա առաջա):

Դ.

«Ո՛վ ծեր վատ և զառամեալ,
թափեալ յուշոյ՝ և զուրկ 'ի շարժմանց.
մկանունք իմ քեզ ալիք խեղդման. և
կոհակք բարկութեան իմոյ 'ի կործա-
նումն անձին քո: Զի՞ կաս 'ի խօսուն
և ընդէ՞ր ոչ համբուրես զդադար լը-
ռութեան:

Շաղիղ քո՝ գէշ թռչնոց, ձայն քո
տղրկի. մեռօրինակ անշնչութիւն քո՝

մահ մերձեցելոց . տարածութիւն քո՝ աւիշկ դժնեատեսիլ . լորձունք քո՝ չիթք զազրոտիք . յօդուածք քո՝ խը-տութիւն անդամալուծից : Զի՞նչ քո այդ անզօր պարծանաց շչուկ . և 'ի վէպս՝ անվեհեր համարձակութիւն : Քանզի որք ընդ քեզ բարեկամանան՝ գու-մարք են թշուառական գերեաց : Սպա-սաւորք կարօտեալք հացի . չուառա-կանք և մերկանդամք . որք ոչ իսկ բը-նաւ ճանաչեն զազնիւ բարս , ուստի և առ անարգդ դիմեն :

Իսկ որք ազնուորդիք , ո՛չ եւ եթ մերձենալ 'ի քեզ , այլ նա և նողկանօք տաղտկան յերեսս 'ի քեզ հայելոյ : Եւ փակեն իսկ զտեսութիւնս իւրեանց 'ի քում տեսլենէ : Եւ ոչ միայն փախչին 'ի ցուրտ և յանհամ տեսլենէդ . այլ և կուտեն կուտակեն զվայս և զեղուկ 'ի գլխոյդ վերայ :

Եւ թէ ոք յիւր բնակ զքեզ հրա-ւիրէ , կամ զօձ , և կամ զթոյն օձի՝ յորովայն իւր ամայ : Այո՛ զքեզ պաշ-տողաց ընձեռես (գիտեմք) զերկուս



շնորհս . մի՛ զի շունք հալածին 'ի նո-ցանէ . եւ երկրորդ՝ զի գողք արտա-լածին 'ի բնակութեանց նոցա :

‖ Շունք հալածին ‖

Վասն զի ըմբռնես զոտս նոցա 'ի ցաւ ուռուցիկ հողմոյ . և 'ի կսկծա-նաց նորին ցպով շրջին . և շանց տե-սեալ զցուպն 'ի ձեռս նոցա , խիթան և փախչին :

‖ Գողք արտալածին ‖

Վասն զի կապես զնոսա 'ի մաղա-սաբեր հազս . որք անդադար 'ի մեծ դոչիւն դղրդեն զտունն , և գողք լու-եալ զձայն նոցա՝ զարթուցին վարկե-լով զընտանիսն՝ խուսեն 'ի տեղւոջէն :

Եւ ահա այսոքիկ են քոյդ շահք : Քեզ ասեմ՝ քեզ , լսե՞ս զի՛նչ է զոր ասացի . և ո՞չ ապաքէն այս ամենայն , փոխումն միութեան ընկերականի :

Զի՞ պարծիս անպատկառ . ո՞ է որ

զտարշելոյդ մերձեցոյց 'ի շրթունս եւ ոչ զղջացաւ »։

Գարեջուր յայս հոծ նախատանաց ընծերութեան կորեկոզւոյ ծաղածանակեալ, յետ որ՝ գովաբանութեան, գովանաց զնիւթ ժողովոյն։

« Տիրապէս ինձ վայել է գեր 'ի վերոյ ելանել փառօք քան զամենայն աթոռանիստս։ Ոյժ իմ ոյժ կենաց, եւ կեանք իմ կենդանարար ինձ ժամանելոյ։ Յինէն ոչ կայծ ակարութեան, այլ փրփրաւոր աւուրց բազմաց ընդարձակութեան։ Ո՞վ հաւասարեսցի ինձ. և ո յանդիմանել զիս մաքառեսցէ։

Եւ մինչ Գարեջուրն 'ի կատարել զգովեստ իւր բարձրաթռիչ ճախրէր, Մեղրօշարակն ոչ կարացեալ տանիլ ամբարտակին ամբարտաւանութեան, զերդու մեծամոլին ելանէր կարկել »։

Մեղրօշարակն պատասխանեաց ընդ Գարեջրոյն, և ըստ հակառակն ընդդէմ նորա և տուեալ ոչ երբեք անդադար։

— 65 —

Ատենախօսութիւն Մեղրօշարակի
(Պաղ ասոյս)։

Ե.

« Զամբ զամբ՝ անասնային կենաց, մայրենի դու, կարկեամ համբ լեր. ո 'ի փողոցս ստնակոխ շրջմոլիկ։ Բնակութիւն քո յաղբիւս և 'ի քակոր։ Ասպարանք քո՝ որովայն աքաղաղաց և հաւուց և թռչնոց։ Գերեզման քո՝ փոր ձիոց, և գիր դագարման՝ կոկորդ ծուլից ռնչական կենդանեաց յոլովակաց։

Զի՞նչ 'ի քեզ այդ ժպրհութիւն բանի. և զի՞նչ ամբարհաւաճ լեզուագարութիւն։ Զիա՞րդ իշխեցեր զպատիւ և զանուն այնպիսի ծերունւոյն 'ի գետին զգետնել։ Եպերանք բանից քոց՝ որ զնմանէ, քոյդ աւաղեցին զյարդ։ Զի՞ ասես. չէ՞ր օրէն արդեօք 'ի շնորհս բազմամեայ նորին ալեաց՝ զանց զպակասութեանցն ելանել։

Ամսյաբնակ դու, մի՞ վարկեր թէ այս այգի է 'ի տէրանց ամայի, ընդէ՞ր

ոչ ածեր զմտաւ, թէ գոյ այգեպան
և այս այգեստանի : Եթէ էր 'ի քեզ
ամօթխածութիւն, աղխէիր զատամն
ընդ ատամունս՝ և յերեսս ալեւորին
ոչ վազէիր :

Ո՞ւր հոլովես, ո՞ւր, պնդեա՛ զմէ-
ջս քո ներքեւ զայր այրի. ա՛նց առ ո-
րեարս նահանգացն Մոլդավիոյ. որոց
բնակիչք քան զանբան վատթար, ըստ
վատթարագոյնդ յարգեն : Ա՛յլ 'ի քե՞զ
գիտեմ չէք ինչ մեղ. մեղք նմա, որ
եթող ոտից քոց ընդ յարկաւս մտա-
նել :

Եւ որովհետեւ գտար աստ միան-
գամ; 'ի քեզ դարձիր, և յանկեան, յո-
րում վիճակեալ կաս՝ նիստ լռիկ, և
ա՛րկ զպաստառ պատկառանաց զերե-
սօքդ, զի չէք ինչ քեզ մասն պատւոյ
'ի ժողովս » :

Այս դարձուածն Մեղրօշարակին զեան Մեծա-
Բանական յետ յորդ :

« Ամենեւին և ամենայն իրօք իմ են



թատերք . արդասիք իմ յամենայն ա-
պաքինիչ դեղօրայս քաղցրութեամբ
փաղփաղեն, և զզօրութիւն իմ մատա-
կարարեն :

Զափազանցական գովասանութիւնք
որչափ և առաւելցին, և եւս առաւե-
լագոյն գատիմ, մեծարանաց արժա-
նաւոր : Իսկ քեզ զի՞ » :

Զայս համառօտ գովեստ մինչ ընդ-
լսնէլ փութայր մեղրօշարակն, ո՛չ կա-
րացեալ տանել բաղ ջրոյն, արագէր
խափանել զձայն պարծանաց նորա,
ասելով.

Բաղ Ջուր Բորբեալ 'ի Բարկութեան Երգիծանէ
Բորբոքելոյն զՄեղրօշարակ . և դառնացուցեալ
զխաղաղութեան նորա, յապաւէ զԳող նորին :

---

Ատենախօսութիւն Բաղ ջրոյն ( Ֆիշնապ ) :

## Զ.

« Յաչս քոյոց պաշտողաց ո՛ դու
տաղտկալի և դիւրադարձ 'ի դառնու-

թիւն, լի՛րբ և թանձրանիւթ։ Առաջի ներկայութեան իմոյ զի՞նչ քեզ այդպէս յայտնի կացել. և ո՛ ետ քեզ զլուխ ամբառնալ։ Վասն է՞ր անցեր զպարկեշտութեանն սահմանաւ. ո՞չ յիշես թէ ո՞ւմ կաս առաջի. և ո՞վ է որ լսէ քեզ։

Ահաւո՛ր է այս ատեան։

Կանացի քոյդ բնութիւն՝ թաղեա՛ յաղբերակունս ատեանց կանանց. եւ մածի՛ր ’ի պտղունս նոցա, զի նոքօք զեղու պատրեսցես զխեցուցիկ մանկանց։

Մանկանց զօրէ զօրութիւն քո, ’ի կաթանց հեռացուցանել զոխմար։ Կարճամիտք զքեզ ճարակեն, վարկեալ թէ քեւ զիմաստութիւն համբուրեն. բայց կեանք քո ’ի նոսա դիւրամեռ։

Ե՞րբ ետուր նոցա զքեզ, և անդէն ’ի վայրկենին և արտաքս ոչ վաղեցեր։ Այժմէն իսկ խապառ զքոյին նախատակոծէ՛ր և յաւէն ճմլէ՛ զծանրատեսութիւն, այլ ակնածութիւն զփոքուխմիք ազգակցութեանդ որ յիս, աջակ-



ցեցոյց զիս ներել պարտուցդ։ Ապա փոքու յանդիմանական խրատիւքս յուշիդ կացեմ, զի մի՛ երբէք խապառ վաղվաղեսցէ լեզու քո արտաքս վազել քան զչափ”։

Զայս ասացեալ Բուալոր, դառնայ ’ի պարծիլ զերգսն, նախէլի արփաբերութեամբն։

“Այն յանդիման փայլեցուցի ըզպարծանս սիրատեսիլ անձին իմոյ ’ի գահաւորեալ յիշխանս, եւ մանաւանդ ’ի փափկասուն թագուհիս, յազնուուհի հարսունս, ’ի չքնաղագեղ յերիտասարդս, և ’ի մեծազգի կանայս. որք հրամանի իմում խոր խոնարհութեամբ ծառայեն։ Որոց յօդուածոց գրութիւն եւ մասանց յարմարութեանց չափաւորմար կապակցութիւն, գունագեղեմ գեղգեղեմ ’ի կարմիր վարդ վառեալ, և զերեսս նոցա, երգեցիկս տամ եղանակել. և ’ի պարկեշտ փայլումն՝ զդէմսն ճաճանչագեղեմ։

Որք եւ ոչ իսկ պլում հաւատան զիս, այլ ինքեանք անձամբ անձին բազուկ մերկեն. ձեռն կարկառեն՝ և շատանան զոհութեամբ 'ի պաշտել զիս։ Ի գեղահասակ յիմմէ շնորհատեսութենէ, և յանուշունս բարբառելոյ, ո՞ երբէք ձանձրացաւ։

Կարմրադեղեմ զերեսս և զայտս արեւաձեւ բոլորեմ։ Պարք անգեղոյ անձանց տարադրեալ են յինէն, և չիք իմ միաբանութիւն ընդ նոսա։ Զանարժանս սասանեցուցանեմ և անգամ յորժամ մերձենանն յիս»։

Երգիծանութիւն բալ ջրոյն յորժամ զմեղրօշարակն լուաց, և 'ի կտաւ պատառատուն բրդգզեաց. եւ 'ի լեզու Մխաէյլյէզն, և բալ ջրոյն կործանէր զամբարտաւանութիւն, ասելով.

Կրկնեռայ Բեր Որբոյ վշտացեալ 'ի վերայ Մեծաբանութեան բալ ջրոյն, բանայ զբերան և 'ի նոյն Մեծ նախատէ զնա։

---



Առանձնախօսութիւն կրկնեռաց բերոյ Որբոյն (Մէւէլլէլ)։

Ե.

«Ա՜յ դու բա՜լ ջուր՝ մեծարան, որ զքեզ ամենեցուն ցուցանես փարելի. շա՜տ է քեզ այդ ճամարտակ, եւ ձգումնդ ձեռաց քոց առաւելու քան զքոյդ կար, զի բազուկք քո նիհարք են և փոխտ։ Արդեօք գիտա՞կ ես քում էյութեան եթէ յո՞րոց ծնաւ։ Ո՞չ ապաքէն 'ի խառնակութենէ, զի 'ի տաքորոշ հիւթաւոր գոյակաց գտաւ որքտադրութիւնն։ Ոտք քո չե՛ն ինչ հաստատուն 'ի մի և 'ի նոյն էակութեան։ Եւ ո՛չ ամենայն որ բաւէ տանիլ զքոյդ պչրանս։ Բաժին դու այնոցիկ, որք առանց քրտանց կալան ըղձատանգութիւն հարց։ Եւ 'ի բազում թախանձանաց քոց, զքեզ պաշտողաց հիւծին կերք և փութով լքանին 'ի սիրոյդ։

Հաշեցուցիչ ես կենաց և կորուսա.

նող զհանգիստ մարդկան ։ Միթէ հանդարտիլ քեզ 'ի քոյդ վայր անկարելի իմն թուիցի ։

Ո՞ւմ քոյդ հակադիմութիւն, եթէ զլռութենէ մերմէ վստահիս ։ Ո՞չ գիտես թէ և քեզ զկծեցուցիչ բանից պատրաստին նախատ ։

Ա՛ղէ 'ի կամաց մեծաբանութեանցդ կամ զկջեալ լեր, և կամ շնորհապարտ շնորհաց իմոց ենթադատեմ զքեզ ։ Ապա թէ ո՛չ՝ արդէն իսկ հատից զլեզու քո և տարագրեցից զքեզ 'ի բնակացս » ։

Զայս՝ յայս համառօտեալ՝ քանզի կրկնեցաւն յետոյ պարծ ։

«Անբիծ 'ի ծնունդս՝ գտեալ եմ անխառն և յամենայն ժողովս երկրպագելի. զահ գոհաբանական իշխանութեան իմոյ՝ և քաղցր զօրութեան ընփիւռ էառ յամենեսին ։ Ամենեքին ընծայեն զհաւատ՝ թէ եմ հզօր. և 'ի վեր քան զամենեսեան աթոռակալ



բարձրաբարբառ փառաբանութեամբ փառաւորիմ. և ո՞ իմում եռանդուն զօրութեան՝ զուգակշիռ » ։

Եւ չեւ եւս լռացուցեալ բերոյ որթոյն կրկնեալ զիւր պարծանս, գազանաբար կատաղէր գինի 'ի վերայ նորա ։ Եւ անդէն իսկ իբր վառօդ 'ի հուր հասեալ՝ և իբրեւ զկայծակ յամպահար բոց վառեալ՝ զատեան սասանեցուցանէր, և ահագնագոչ գոռացմամբ աղաղակէր ։

Գինին ամենասաստ Իշխանանօք զայլերախտութեան բերոյ որթոյն պախարակէ, և անպիտան բաժակաբեր զնա համարի ։

---

Ամենախօսութիւն Գինւոյն (Շէրայ)։

Ը.

«Վիշապաթոյն եօթնագլխի անպարտելի իմով զօրութեամբ, ո՛ դու ապերախտ, քո ջախել ջախջախել ըն-

գլուխ, յարեայ աւասիկ և կամ 'ի խնջախ ։

Դու միայն գտար առաջի իմ լեզու խաղացուցանել. յանդուգն ապերասանութիւն քո յումմէ՞. քո՞յդ վարկես զզօրութիւնդ՝ զոր ունիս։ Երթ 'ի կորուստ յատենէս ։

Ասա՛ ո՞վ ետ քեզ զայդ իշխանութիւն. նիւթ քո զի՞նչ. և ո՞ ծնաւ ըզքեզ։ Ուրջու՛ մոլի, ո՞չ գիտես զի 'ի քոց վաստակոց լցան տունք հեթանոսաց. հոմանիք քո թիւրեցան 'ի ճշմարտութենէս. կարէ՞ զայրացոյց զսիրտ իմ պարծանաց քոց բանք, և ոչ կարեմ տանիլ։

Գերութիւն քո գերութիւն յիս, հանդերձ քո ձեռք իմ ետուն քեզ, և հոտ զգեստուց քոց, իմ։ Զօրութիւն անձին քո, յինէն. և ոյժ կարողութեանդ՝ իմ։

Ի՞ւ ապա զանձն քո առաջի արարեալ այլևայլես զորամադրութիւն բանիդ։ Ապերախտ, զիա՞րդ զնորհս իմ մոռացար՝ վաղ։ Պատիժ իմ քեզ՝



կործանումն աթոռոյդ. անուն քո միայն մնացէ 'ի ժողովս, և դու աներեւոյթ յարալեզ։

Եւ որոց պարծէին մինչև ցարդ (զահակալաց ասեմ և պետաց) ձայնք որզկի համարէի և զմեղուաց բզզանս. իսկ քոյդ՝ մժղկի անզօրի ։

Ո՞ իբրեւ զիս հզօր. և ո՞ առաջի իմ ատենախօսել կարող։ Զորդիս յանցանաց տեսանեմ զձեզ. և զի՞ է կատուի առաջի բանալ առիծու զծիրան »։

Յայս կոծ կարկտահար ջախջախեալ գինւոյ՝ ըստ կատարէ կրկնեալոյ Բերոյ՝ յետ Գող հասարակէ ըերեալ ։

«Ի վերայ աշխարհի և յամենայն տեղերս մի եմ. և մի միայն, չիք ոք քան զիս հզօրագոյն. և չիք ուրեք իբրև զիս որոտող։ Եւ կեանք և զօրութիւն անձրեւեն ձեռք իմ ամենաբաւ »։

Եւ սկզբնաւոր զայս խոլոտ փքացման մինչ գինին լեզուագարել և ընդլայնել եռայր, կորէին թելք համբե-

րութեան օդւոյ. վասն որոյ համարձակ
յանդիմանութեամբ յապաւէր զկար-
կաչ նորին. և զապիրատութիւն նորին
և զչարութիւն բացայայտ առաջի ժո-
ղովոյն մերկէր ։

Ողէ՝ զզօշէալ չարութեան և զանզգամութեան
գինւոյ՝ յայտնէ յատենի, և զչարի բարս նորա
յայտ յանդիման նշաւակէ անձնէհեր ։

---

Առանձնախօսութիւն Օղւոյն (Բաժը)։

Թ.

« Ա՜յ խայտառակատեսիլ ծաղու
ծանակ անառակ, և աշխարհակործան
արեանարբու անօրէն։ Զի՞ է քեզ 'ի տե-
եղերագումար յընկերութիւն միու-
թեան զոտս ձգել։ Յանկարծադէպ կա-
թիլ քո 'ի վերայ ումեք՝ մեղք քրեա-
կան։ Եւ եթէ ոք քեւ պարարի՝ որո-
շել ո՞ր իւր ժառանգ՝ և ո՞ր օտարին՝ ան-
գիտանայ ։



Զարիւն՝ մերձաւոր արեան տաս շա-
ղախել. և զամենայն գործ նոցա ըստ
գործոց քոց շրջես յանօրէնութիւն։ Եւ
եթէ ոչ հրաժարեսցի նա 'ի քէն՝ և ոչ
զղջասցի և ապաշխարեսցէ՝ ընդ չարա-
գործս՝ կամ լաւ ևս ասել իբր զան-
հաւատ դատապարտի։ Եւ որք այն-
պիսի անբաժ միաւորութեամբ 'ի քեզ
սիրաւորեցան, տեսա՛ք, զի 'ի ճոխու-
թեանց ընչից՝ լքան անկան. աղքատա-
ցան և տնանկացան. և փողոց 'ի փո-
ղոց շրջելով պատ 'ի պատ՝ 'ի դրունս
'ի դրանց դեգերելով հացի գին մու-
րացին։

Եւ հուսկ ուրեմն ըստ վայրի վա-
րազ տղմասէր, յանցս ճանապարհաց
զոգի փչեցին։ Ելով նոցա՝ անկողին,
տիղմ. վերմակ՝ օդ. բարձք գլխոյ՝ լա-
կոտք սատակեալք. և պարառուք՝
շունք։

Թշուառական դու, քե՛զ ասեմ ե՛լ
և երթ 'ի կորուստ 'ի միջոյ պարկեշտա-
սուն և խաղաղասէր ժողովոյ ամբոխիս։

Ապա թէ ո՛չ՝ ո՛չ թողում սուտան

նախատանաց զորս 'ի գլուխ քո ոչ կոր-
զեցիր : Արժանաւոր պաշտօն փառաց
քոց երկրպագութեամբ միայն 'ի մի մա-
սին տեսանի . և այն' կորուսանելով ա-
մենակարողին միայնոյ' զնիւթ քոյ գո-
յացութեան : Պարծեցիս և եթ 'ի
պատահմունս, որք անկորուստ պա-
հին 'ի նոյն հրաշափառութեան ":

Ի սոյն շէջուցանէր օդն զհուր բարկութեանն բոր-
բոք, և դառնայր 'ի պարծիլ անձին :

«Ես իսկ գտայ արժանաւոր ընդու-
նելութեան ժողովոյն . զի սպիտակա-
փայլ պարզերեսութիւն մաքուր տե-
սութեամբ իմոյ ցանկացեալ ամենեցուն
զինեւ առնուն պար : Ճակատ իմ ճա-
կատ լուսոյ . և աչք իմ 'ի խաւարչտին
տեղիս արեգլոյս զուարթուն ; Ճաճանչ
սփռուն սիրոյս' մինչև ցմանրիկ մթնո-
լորտ յերակս երագեն : Ջերմին զօրու-
թիւն իմ' զցրտութիւն սառնամանեաց,
և զխստաքեր հողմոյն տապ' փարատէ :
Արդ որովհետև այսպէս' իմ գահ'



արժանակառոյց . և տէրութիւն իմ'
հաստատուն արքայութիւն, 'ի վեր քան
զամենից :

Պաշտօն իմ' պաշտօն թեթև . և
նիւթ իմ' նիւթ լուսաւոր . իսկ փառք
իմ' փառք ամենափառաւոր ":

Եւ տակաւին յորժամ բանք սորա
'ի բերան էին, և եւս յաւելուլ զսնա-
պարծութիւնն ճախրէր . անդէն ան-
հնարին ցասմամբ և մեծ բարկութեամբ
յարեաւ սուրճն բարեհոտ . և զփըր-
փուր իւր եռանդուն ընդ Ասիա' և
ընդ Ափրիկէ . ընդ Եւրոպիա' և ընդ Ա-
մերիկա արագ արագ սփռէր : Եւ հաս-
տատէր զաթոռ տէրութեան իւրոյ
բարձրագոյն քան զամենայն պետ . և
արձակ համարձակ ամբառնայր զձայն
և ասէր .

Սուրճ սուրբ զամենից գոյակից զարդ և զար-
ժանապատուութիւն յանձին կրէ . և զհուր խո-
հական զօրութիւն յերկինս չափ ընդ տարերս
վերադաւէ :

## Ատենախօսութիւն Սուրճ սեւակրի

(Թուրքէ)։

## Ժ.

« Ա՛յ որդիք նենգաւորք եւ մանկունք նշաւակի. զի՞նչ այս ձեր ՚ի յամբոխս մուտ. եւ ո՞ր անպատկառ ընդ միմեանս դիմամրցանակ մարտ բանի։ Ո՞չ գիտէք եթէ աստ բազմեալ կամ, եւ ամենայն արտօնութիւն պատուոյ ինձ ՚ի տիեզերաց ընծայի։ Զարմանք՝ եթէ ընդէ՞ր գործք ձեր՝ զերեսս ձեր զամօթի ոչ հարկանեն »։

Ընդ այս նախադէնս ո՛չ տոկալով իննեակ պետրոյ, յարեան յոտին յանթոռոյ իւրեանց, եւ եղերեն զսուրճն, յաղագս Տիւրագին իմն ընկերոյն։

« Զքե՞զ գովաբանես. եւ ընդէ՞ր վաճառ քո զիւրազին. եւ թէ էիր արժանաւոր ումն՝ կշիռ քո եւ գին՝ ծանրածախ երեւէին »։



Խեթահարէ սուրճն ՚ի բանից նոյա. զերկրպագոս կայսրութեան անձին իւրոյ զամենապէտ. եւ զանձինն գովաբանէ։

---

## Կրկին պատասխանատուր ատենախօսութիւն Սուրճ սեւակրի։

« Արդ՝ առ ձեզ են բանք իմ, անզուսպք, ինձ ի՞ւ համարձակիք զին հատանել, եւ այն զիւրազին զատեալ։ Գալուստ իմ ո՞չ ապաքէն առաջին է քան զձեր ծնունդ. յառաջ քան զԱբրահամուն եւ զՆոյին քարոզի իմ դոյութիւն. ընդ որս եւ զքաղումն նահապետաց։ Ո՞չ գիտէք զի եւ Սողոմոն անգամ ՚ի պաշտօն փառաց իմոց խոնարհեցաւ. եւ սէր ՚ի վերայ իմ ամենեքեան աներծ ունէին, եւ զիմ պահեալ միշտ պաշտօն՝ կտակաւ յորդիս՝ եւ որդիք յորդիս՝ եւ ՚ի թոռունս հաստատէին. պատառ մեծատանց, պարէն թախձաւոր անձանց, այս իմ ձեռք ընձեռեն։ Նաեւ

'ի կոչունս իսկ, յորս և դուք մտանէք, եթէ ոչ ժամանեսցեն իմ գնացք, ընդունայն ձեր յարգ. և 'ի զուր՝ համայն ձեր պատիւ դատին։ Կնիք եմ և տէր 'ի վերայ ամենեցուն։ Յարգութիւն իմ յախճապակին գաւաթ, որոյ և արծաթեայ և ոսկենիւթ յագոյցս փառաւոր փայլի։ Եւ այն՝ 'ի ձեռս չքնաղատես օրիորդաց և կուսից, երիտասարդաց և մանկանց բազկամերկ մաքրասնից։ Եւ արք զգօնամիտք և իմաստուն խոհականք՝ հոգւով սիրահարեալ են ինձ։

Նա մանաւանդ 'ի հանճարունակ ծերունեացն յերամ, շնորհտեսութեան իմոյ փայփայէ, և յիմ վայելչութիւն խմբին ամենայն բարիք։ Ուր չիք կառուան ոտիցս, չիք անդ և սէր ընկերական։

Թող զայս. ո՞չ ապաքէն յանուն իմ հոյակապ շէնք՝ և ոսկեզօծ գեղանկար կերտածք ինձ բնակարան պատրաստին։

Եւ յորժամ ձեռք՝ որ ընձեռեն զիս այլոյ ումեք ձեռաց, ամենայն շուք իշխանութեան և զօրութեան իմոյ անդ



ծագի ծաւալէ։ Եւ ծիծաղք շնորհակալութեան՝ ժառանգորդք իմ տան՝ զմխմեամբ ելանեն։ Եւ զի՞րդ ապա այսուքիկ իմ զօրութիւնք, ոչ առաւելուցուն քան զամենեցուն կարողութիւն։ Ես եմ և չիք այլ ոք արժանաւոր արքայ՝ և արքայից արքայ ամենայն աշխարհի։ Եւ կնքեմ իսկ զմեծութիւն իմ յանուան կայսեր։ Մահու էք պարտաւոր. բայց զիջանիմ աքսորմամբ վճարել զտոյժ յանցանաց ձերոց"։

Եւ լսեալ զարժանաւոր գովասանս. ամենայն պերճք և գահակալք, անդէն ժողովականին յառնէին յաթոռոց իւրեանց, զթագ 'ի գետին խոնարհեցուցանէին, և ծնրադրական յերկրպագութիւն անկանէին առաջի նորա։ Եւ ներումն համարձակութեան իւրեանց և մեծաբանութեանց և հակառակախօսութեանց պատկառանօք ժպտեն. և հայցէին չափ զնուաս ըստ յանցանաց իւրեանց 'ի դատ մահու, և հաճէին գնալ յաքսոր։

Մաղթողական աղերս ինմունց Գոյակաց

« Ո՜վ հզօր տէր,

Ի չկօթակս առնելդ զմեզ 'ի տար երկիր հեռաւոր, յոյժ աղաչեմք, մի՛ յանմարդիս լիցի այն, զի մի՛ 'ի մահ կորիցուք։

Աղաչեմք զքեզ տուր մեզ հրաման զի ընդ ընկերս մեր՝ որք սիրեցին զմեզ՝ զկեանս մեր վարեսցուք, և ո՛չ բնաւ այսուհետեւ առաջի քո մեծաբանեսցուք։ Զի գիտացաք զմեծութիւն ողջախոհ տէրութեան քոյ։

Եւ ահա ծառայս կացուցանեմք ըզմեզ յամենայնի 'ի հրամանս քո. և որ ինչ արժանաւոր մեզ՝ զայն ամենախոնարհ հպատակութեամբ զպարտանս ընծայեցուցեալ կատարեմք. և տէրութիւն քո՝ տէրութիւն յաւիտենական՝ ըստ աւուրց երկնից մեծացուցանեմք »։

---



Սուրճ տուրք լէ աղաչանաց նոցա, և շարժանաւոր փարագրութեան շնչյուն նոյա պատրաստէ։

Եւ Սուրճ սուրբ լուեալ զմաղթանս աղաչանաց իմնեակ դասուց հիւթաւոր պետաց, հրաման հրովարտակի տայր 'ի ձեռս իւրաքանչիւրոցն, և առաքէր զնոսա յընկերութիւն պատկանաւոր՝ զնոսին պաշտողաց։

---

Արժանաւոր փարագրութեան խորաչանչէոր պետաց 'ի պատշան նահանգս։

## Ա Ք Ս Ո Ր

Զգինի և զօղի՝ յԵւրոպիա և 'ի նորին նահանգս (այսինքն է Ֆիրէնկիստան)։

Զմեղրօշարակն՝ յԱսիա և 'ի նորին նահանգս, (այն է Անատօլէ)։

Զկորնկոզն՝ 'ի Պօնտոս և 'ի գաւառս նորին, (այն է Քարմ և Ապալա)։

Զգարեջուրն՝ 'ի Մոլտավիա և 'ի գաւառն նորին, (այն է Իլախ Պօղտան)։

Զբալ ջուրն՝ յԱնդրիանուպօլիս և 'ի նահանգս նորին, (այն է Էտիրնէ)։

Զկրկնեռացն՝ 'ի Հելլեսպօնտոս և 'ի նահանգս նորին, (այն է Կէլիպօլի)։

---

Սուրբ սուրբ՝ տէր պահէ զԱփփոն և զՊերճ Եւր խորհրդական Բարեկամ և զԾոմոքալ ծառայ անչէն կոյուոյանէ և զէր ավող հաւատարմ Թա-գաւորութեան 'ի Թագաւորեալ քաղաքն Կոս-տանդնուպօլիս։

Զսոսա զամենեսին յիւրաքանչիւր մեծակս արտալածեալ, ինքն եւս զԱփփոն և զՊերճ իւրեան հաստատեալ աջակից, և զԾուխսն կամակատար կա-



ցուցեալ ծառայ 'ի սպասու. զաթու իւր հաստահիմն կառուցանէր 'ի Պի-զանդ։

---

Ժողովն շնորհակալ լինի զամենայն այսոցիկ ա-ւետեական խրախուսանութեանց, տալով 'ի Գոր-ծըս, և ապեանս փակին։

Իսկ ընկերական միութիւն ժողո-վոյն զայս ամենայն հանդէս հրապարա-կական և զամենայն մեծաքանութեան զգաղանիս տեսեալ, զբարին եւ զչար բարեպէս կշռադատեալ և գոհաբա-նութիւն ամենասիրուն Սուրբ սուրբ արքայի տուեալ, հրամանաւ նորին դառնայր այնուհետև իւրաքանչիւր ոք 'ի գործս ձեռաց իւրեանց։

Վախճան ամենայնի՝

Սկզբան բանից Մատենիս :

# ՅՈՐԴՈՐ ՓՈՔՐ

## Սիրուն այս Զբօսարան

Կարծեմ վերծանողաց տայ զօգուտ բարեաց և քաղել՝ եթէ ո՞ր վայելուչ։

Զի զակատիլն զհետ՝ և եթ միոյն 'ի ստացանէ 'ի հիւթաւորաց՝ մոլեկան ու-նակութեամբ, զկեանս որ կարճ՝ խա-սպառ կարճէ, որպէս ասացաւ 'ի կան-խաբանութեան։

Եթէ չէ՛ օրէն լինել անձնամեռու-ցիկ, ապա ըստ վայելչութեանն ածելն 'ի կիր, դշխոյ անձնաշահութեան տե-սանի։ Եւ ըստ մասնեայ բարեկամու-թեան ստացանպատ՝ 'ի նուաղ համես-տըն կնքի։ Իսկ որք անցանեն զսահման չափաւորութեան, վաղամեռիկ հեռա-նան յաշխարհէ. վասն զի չէ՛ բարեկա-մութիւն նոցա հիմնեալ 'ի յղփութեան։ Զի թէ և բարեկամք, բայց և այնպէս խրատ տայ մեզ իմաստունն. « Մի՛ հա-ճախել ոտս 'ի բարեկամ »։

ՀՀ Ազգային գրադարան
NL0161078

552

8
И-55